№ 263 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30 — 1904 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30 № 263

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

(33-ՐԴ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԿԱՑ **1905** ԹԻԱԿԱՆԻՆ

«ՄՇԱԿԸ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ամեն օր, բացի տօներին յաջորդող օրերից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ռ., տասն ամսվանը՝ 9 ռ., ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ և վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եապօնական զօրքը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նկարչական ցուցահանդէս. Ուրախալի երևոյթ. Հայոց ներկայացումները Բագուում. Խրիմի հաբաւային ափից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԵԱՊՕՆԱԿԱՆ ԶՕՐՔԸ

Մենք մի քանի անգամ հաղորդել ենք տեղեկութիւններ եապօնական զինուորական ոյժի մասին։ Ճիշդ թիւեր ձեռք բերել, անկասկած, անհնարին է, բայց մօտենալ ճշդութեան կարելի է։ Մի այդպիսի փորձ աշխատում է անել Բերլինի «Post» լրագիրը, (Տես Н. В.) որի թղթակիցը չանք է գործ դրել ստուգելու իր ժողոված տեղեկութիւնները։ Մենք առաջ կը բերենք մի քանի կարևոր կէտեր։

Պատերազմի սկզբում Եապօնիայում կային 450,000 հոգի զօրք։ Այդ զօրքը բաժանված էր երեք մասի հաւասար քանակով, հաշուելով իւրաքանչիւրի մէջ 150,000 հոգի։ Մի մասը դաշտային բանակի մէջ էր, միւսը պահեստում, երրորդը պատրաստ մտնելու գործի մէջ, երբ պահանջվի։

Ներկայումս Շախէ գետի մօտ կանգնած է մինչև 220,00 հոգի եապօնական զօրք։ Դա է այն զինուորական ոյժը, որ պէտք է դիմադրէ ռուսաց զօրքին։ Պօրտ-Արտուրի մօտ կայ 40—50,000 եապօնական զօրք։ Զանազան տեղերում, պահակներում պէտք է հաշուել մօտ 30,000 հոգի։ Մի 50,000 հոգի էլ մնացել են Եապօնիայում որոշ նպատակների համար։ Ընդամենը, ուրեմն, 350,000 հոգի։

Եթէ զօրքի ընդհանուր գումարից հանենք այդ թիւը, կը ստանանք 100,000 հոգի։ Դա կորուստների քանակի թիւն է։ Եապօնացիները կորցրել են մինչև այժմ 100,000 հոգի։ Այդ թիւը կազմված է հետեւեալ մասերից։ Պօրտ-Արտուրի մօտ պէտք է հաշուել եապօնացիներից 30,000 հոգի զոհ։ Ցամաքի զօրքերից կորել են մինչև Լաօեանի պատերազմը 12,000 հոգի. Լաօեանի մօտ 17,530, Շախէ գետի մօտ 15,879 հոգի։ Եթէ հաշուենք մօտ 25,000 հոգի էլ հիւանդացածներին, այն ժամանակ կը լրանայ 100,000 հոգի թիւը։

Ի՞նչպէս պէտք է, սակայն, լրացնել 100,000 հոգու պակասը։

Անկասկած՝ Եապօնիայում մարդու պակասութիւն չը կայ զօրքի շարքերը լրացնելու համար։ Խօսք կարող է լինել միայն այն բանի մասին, թէ ինչ եղանակով կարելի է մարդկանց պատրաստել լուրջ պատերազմական գործողութիւնների համար։ Չը կան հին զինուորներ, որպէս զի նրանց մէջ մտցնվեն նորերը և այդպիսով գնդեր կազմվեն։ Պէտք է նկատել, որ զինուորներին կրթելու և վարժելու պարտաւորութիւնը շատ պատասխանատու և կարևոր գործ է և որ դրա համար անհրաժեշտ են փորձված և շնորհքով օֆիցերներ։ Այդ պատճառով եապօնացիները թողել են մայր երկրում հմուտ օֆիցերների, որոնք թէև քիչ են թւով, բայց բարձր որակութեան մարդիկ են։ Նորավարժ զինուորներին ուղարկում են անմիջապէս պատերազմական բանակները, սակայն չեն կազմում նրանցից առանձին գնդեր, այլ նրանց մտցնում են արդէն գոյութիւն ունեցող և փորձված գնդերի մէջ։

Առաջիկայ գարնան կուղարկվեն նորավարժները և կը սկսվի նոր զինուրակոչ, ինչպէս կատարվել է իւրաքանչիւր տարի։ Եապօնիայում տարեկան կոչվում է մինչև 45,000 զինուոր։ Բայց կարելի է զէնքի կանչել մինչև 100,000 հոգի։

Այս թիւերը համապատասխան են այն տեղեկութիւններին, որոնք փոքր ի շատէ ստոյգ են ճանաչված և կրում են մասամբ պաշտօնական բնաւորութիւն։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

I

Թիֆլիսի Փառքի տաճարում հանդէս են դրված կովկասեան նկարիչների նոր գործերը։ Ի՞նչ է նրանց բնաւորութիւնը։ Պարունակում են արդեօք նոր թեմաներ, կամ ներկայացնում են հին թեմաների նոր արտայայտութիւններ։

Ներկայ ցուցահանդէսը մեծ մասամբ տալիս է տեսարաններ։ Իսկ այնտեղ, ուր մարդիկ են հանդէս բերված, նրանք սակաւ դէպքերում ունեն կենցաղավարական հետաքրքրութիւն։

Տեսարանների ընդհանուր բնաւորութիւնը կազմում է մեղմութիւնը։ Գետը հանդարտ է, երկինքը խաղաղ, ծովը թեթև ծփանքով, անտառը անշարժ։ Նկարիչները մեծ մասամբ արտայայտել են իրանց զմայլանքը բնութեան խաղաղ տեսարանների առաջ։ Նրանք չեն ցանկացել ներկայացնելու գոռ փոթորիկ, գետի հոսանքը կովկասեան ձորերում, անտառի կոծը մրրկի ժամանակ, փրփրադէզ ալիքներ, սարսեցուցիչ քերծեր, արծուի սլացքը դէպի իր զոհերը, անդաստանի տեսքը կարկտի ժամանակ կամ նրանից յետոյ... Մենք անշուշտ չենք խօսում շատ սակաւաթիւ բացառութիւնների մասին, այլ աչքի առաջ ունենք ընդհանուրը։

Խաղաղութեան, զմայլանքի, հանգիստ դիտողութիւնների առաջ ենք կանգնած մենք։ Այդպէս են տրամադրված եղել նկարիչները, այդպիսի թեմաներ են նրանց հետաքրքրել։

Ցուցահանդէսում նկարները զետեղված են այս կամ այն նկարչի գործերի ժողովածուների ձեւով։ Դա ունի իր որոշ յարմարութիւնը, որովհետև դիտողը գաղափար է կազմում նրա նկարչի ստեղծագործութեան բնաւորութեան մասին, կարողանում է գործերի թոյլ և ուժեղ կողմերը շուտ ըմբռնել և համեմատութիւններ անել նկարիչների հաւաքական գործերի վերաբերութեամբ։

Մենք կը սկսենք մեր պտոյտը ցուցահանդէսի ձախ բաժանմունքից։ Այդտեղ դրված են Բաշինջաղեանի և Զախարովի նկարները։

II

Բաշինջաղեանը հանդէս է բերել 38 նկար։ Նրա հաւաքածուն նախ և առաջ գործում է փորձված և վարպետ ձեռքի գործերի տպաւորութիւն։ Նրանց մէջ մենք տեսնում ենք և հին թեմաների կրկնութիւններ և նրանց նորագոյն ճիւղաւորութիւնները։ Նոր են այն տեսարանները, որ նա վերցրել է Արցախի և Սիւնիքի կողմերից։ Նոր են և Մալօրօսսիայի տեսարանները։ Շուշու շրջակայքից մի տեսարան դրոշմվել է մի ընդարձակ պաստառի վրա։ Նա ներկայացնում է լեռնային երկրի մի մեծ հօրիզոն լուսնեակ գիշերվայ ժամանակ։ Զանգեզուրի բնութիւնից տեսարաններ չը կան։ Նկարիչը ներկայացրել է գիւղի և շրջակայքի երկու պատկեր։ Պէտք է ենթադրել, որ անծանօթ երկիրը իր կենցաղով աւելի է ազդել նկարչի երևակայութեան վրա, քան բնութիւնը։ Գուցէ ապագայում մենք տեսնենք և Զանգեզուրի շրջանից բնութեան նկարներ, որովհետև այնտեղ կան հետաքրքրական տեսարաններ, գոյների և ստուերների անակնկալ խառնուածքներ։ Առ այժմ մենք ունենք գիւղական պատկերներ։ Նրանցից մէկը՝ Դայմադաղլու գիւղը (№ 44) ունի աւելի ընդհանուր նշանակութիւն, որովհետև գաղափար է տալիս Զանգեզուրի գիւղերից մէկի դիրքի և տների մասին, դա և տեսարան է և ազգագրական մի էտիւդ։ Միւսը վերաբերում է յատկապէս մի որոշ տեղի, այն է դպրոցական մի շէնքի։

Հին թեմաներից մենք տեսնում ենք Արարատը և Սեւանայ լիճը։ Արարատը ներկայացված է գարնան տեսարանով, իսկ Սեւանայ լիճը արեւամուտի ժամանակ։ Վերջին պատկերը հետաքրքրութիւն է ներկայացնում վերջալոյսի շողերի, հօրիզոնի գունաւորութեան և ստուերների խաղի արտայայտութիւններով։ Այստեղ յիշենք և Կազբէկ սարի տեսարանը արեւածագին։ Բնորոշ են և լեռնագագաթը և լեռնային մշուշը և լեռների առաւօտեան գունաւորութիւնը։

Աչքդ է ծովային մի պատկեր, որ անուանված է «Խաղաղութիւն»։ Զուրը կանգնած է իբրև հայելի, չէ ծփում, նրա մէջ անդրադարձել են գունատ ամպեր։ Ծովի ջրի բաց կանաչը դժգունացել է հօրիզոնում և ստացել է ամպերի գոյնը։ Նկարի բովանդակութիւնը մեծ չէ, բայց լաւ արտայայտված է։

Ինչպէս յայտնի է, Բաշինջաղեանին աջողվում են անտառի, անտառային ջրերի, ճահիճների պատկերներ։ Նրանք և ներկայ ցուցահանդէսում տպաւորութիւն են գործում և նրանք կարող են գտնել լաւ գնողների, մանաւանդ օտարների կողմից, որովհետև յիշեցնում են հիւսիսի տեսարաններ (№№ 51, 53, 56, 63 և ուրիշներ)։

Բաշինջաղեան ներկայացրել է չորս պատկերներից կազմված մի խումբ, որոնցից մէկի վրա ներկայացված է առաւօտը, միւսի վրա՝ կէսօրը, երրորդի վրա՝ երեկոն և չորրորդի վրա՝ գիշերը։ Մի և նոյն տեսարանը զանազան լուսաւորութեամբ և գունաւորութեամբ։ Հետաքրքրական են։ Լաւ նկարներից մէկը պէտք է համարել և «հօրիզոնը» կէսօրի բարձունքից։ Իրրև պատկերներ վատ չեն Բագուի (№ 47) և Կուր գետի (№ 42) տեսարանները, բայց նրանք բնորոշ չեն այդ տեղերի համար, ինչպէս մենք նրանց սովոր ենք տեսնել։

Մի պատկեր, որ անուանված է «Փոթորկից առաջ» (№ 49) պարունակում է հետաքրքրական տրամադրութիւն։ Մեր առաջն են դաշտ և մարգագետին զուարթ տեսքով, գեղեցիկ է ներկան. բայց երկնքում մի չարագուշակ բան է պատրաստվում, ամպը դժգոյն դէմք է ստացել և ահա ձեզ մի ծանր զգացմունք է պատում, դուք զգում էք, որ սկսվելու է փոթորիկ և «երկրային դրախտը» ոչնչացնելու։

Ցանկալի էր, որ Բաշինջաղեան բնութեան այդպիսի բօսէներ աւելի յաճախ արձանագրէր և խաղաղ տեսարաններին աւելացներ բնութեան դրամներ։

Սիրող

ՈՒՐԱԽԱԼԻ ԵՐԵՒՈՅԹ

(Նամակ Իգդիրից)

Ներկայ գաւառապետ պ. Դուդնիկովի օրով մեծ յոյս կայ, որ Սուրմալու գաւառը բարոյապէս և նիւթապէս առաջադիմէ։ Թէպէտ երկու ամիս է, որ նա ստանձնել է իր պաշտօնը, բայց մի քանի կենսական խնդիրներ արդէն շօշափել է։ Գաւառապետը յանձնարարել է գիւղական բանկի ծրագիրը մշակել՝ հաստատութեան առաջարկելու համար, որ սիրով ընդունվել է հասարակութիւնից։ Դրա կարիքը վաղուց էր զգացվում, որի մասին շատ անգամ է խօսվել մամուլի մէջ։ Հասարակական ժողով կազմելով առաջարկել է միջոցներ՝ խմելու համար մաքուր ջուր բերել, Իգդիրի խայտառակ, աղտոտ փողոցները կարգի բերել, սալայատակել և նոյն իսկ Դալկինի լապտերներով լուսաւորել. սրանք այնպիսի բարերարութիւններ են, որ յաւիտեան օրհնութեամբ կը յիշվեն։

Մանրամասնութիւնները չը գիտեմ, բայց յոյս ունեմ, որ գաւառապետի ծրագրից դուրս չի լինի ամբողջ գաւառի դաշտաբնակների առողջապահութեան խնդիրը.—Ջերմախտով տառապում են ամենքը, որի պատճառն է երկրի ճահճայի դրութիւնը։ Ներկայ ճահիճները, կարող եմ ասել, որ զարգացել են վերջին 40—50 տարիների ընթացքում, կամաց կամաց, ջրաշխային անկանոն կազմակերպութեան շնորհիւ։ Ճահիճների զարգանալուն ժողովուրդը նպաստում է չը հասկանալով, տգիտութեամբ, ամենայն եռանդով, որի մասին մանրամասնաբար կը խօսեմ ուրիշ անգամ. սակայն, աւելորդ չէ ասել, որ արհեստական կերպով զարգացած ճահիճները արհեստական կերպով էլ կարելի է ոչնչացնել, որով կառողջանայ երկրի օդն ու ջուրը։ Ճահիճների չորացնելը այնպիսի կարևոր խնդիր է, որ ժամանակաւոր կարգադրութիւնները ոչ մի դրական հետևանք չեն ունենայ, դրա համար հարկաւոր է մնայուն, մշտական յանձնաժողով, որ յատուկ կոիւ մղէ տարիների ընթացքում։

Գաւառապետ Փիրումեանից և Սալաչինակուց յետոյ խեղճ Սուրմալուն զրկված է եղել գուրգուրող, խնամող հօրից։

Սակայն Սուրմալուն արժանի չէր այդպիսի անվայել դաստիարակութեան. նա անցեալում ցոյց է տուել բարոյական և առաջադիմական մեծ ընդունակութիւններ։

Անհրաժեշտ ենք, որ ներկայ գաւառապետ պ. Դուդնիկովը հետևում է ժողովրդի ուղիղ դաստիարակութեան։ Երևոյթը խիստ ուրախալի է։

Յ. Խօջաէյնաթեանց

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ԲԱԳԻՈՒՄ

(Նամակ Բագուից)

Հաւատման զուր չէ, որ համարվում է Գերմանիայի ժամանակակից դրամատուրգների մէջ ամենատաղանդաւորը։ Նրա դրամա-

ները խոր հոգեբանական են և ունեն բեմական մեծ արժանաւորութիւններ, և, ի հարկէ, շատ ցանկալի կը լինէր, որ հայկական բեմի վրա յաճախ ներկայացնուէին այդ դրամատուրգի պիեսները։ Թատրոնը միայն այն ժամանակ կարող է կրթական դեր կատարել հասարակական կեանքի մէջ, երբ նրա մատակարարած նիւթը ստիպում է հանդիսականին խորհել, ցնցվել, լուրջ զգալ և մտածել իր տեսածի և լսածի մասին։

Նոյեմբերի 23-ին խաղացվեց Հաուպտմանի դրաման «Հիւանդ մարդիկ»։ դրաման ընդամենը բաղկացած է 2 գործողութիւնից, բայց որքան նա ճշգրիտ է իրականութեան կողմից։ Այդ գրուածքը, կարելի է ասել, նոյն իսկ դրամա չէ, այլ իրական մի պատկեր։ Նրա մէջ չը կայ մի որ և է դրուութիւն, որը յաջորդաբար դրամայի է վերլուծվում, այլ կայ միայն դրամատիզմ գործող անձանց դրութեան մէջ։ Այդ անձինքը—բժիշկ Շոլց, նրա կինը՝ Միննա Շոլց, նրա զաւակները՝ Աւգուստա, Բօբերտ և Վիլհելմ—բոլորն էլ հիւանդ մարդիկ են և ահա այդ հիւանդ մարդկանց կեանքը մի դժոխք է, որը և շօշափում է Հաուպտման։ Բայց ինչ է պատճառը, որ այդ մարդիկ հիւանդ են—ահա այն հարցը, որ ակամայ տալիս է իրան հանդիսականը և ահա այդ հարցի պատասխանը ինքը ամբողջ պիէսան է, որից և իմանում ենք, թէ բժիշկ Շոլցի անհաւասար ամուսնութիւնը, նրա վատ ընաւորութիւնը, նրա զաւակների անկանոն դաստիարակութիւնը և մանաւանդ այն ախտը, որով վարակված է ինքը բժիշկ Շոլցը, այն է ալկոհոլից առաջացած,—այդ բոլորը վերցրած և եղել են պատճառ, որ մի ամբողջ ընտանիք ֆիզիքապէս և հոգեպէս հիւանդ մարդիկ են, վերջն աստիճանի դիւրագրգիռ և ջղային։ Դրաման, ինչպէս տեսնում էք, լուրջ հարցեր է շօշափում, ուստի և հետաքրքրութիւն է շարժում։

Դերակատարներից աչքի էին ընկնում տ. Սիրանոյշ, Ալիխանեան և Պետրոսեան։ Պետրոսեան (բժիշկ Շոլց) լաւ էր մանաւանդ 2-դ գործողութեան մէջ վրդովմունքի և զայրոյթի տեսարանում։ Տ. Սիրանոյշ (Աւգուստայի դերում) իր խաղով խորին տպաւորութիւն էր գործում աւելի զգացված խաղ դժուար էր երևակայել։ Ալիխանեան (Բօբերտ) այնքան լուրջ և մտածված էր կատարում իր դերը, որ կասես հանդիսականի առաջ կանգնած լինէր ոչ թէ բեմական Բօբերտը, այլ նրա իրականութեան օրիգինալը։ Շատ լաւ էին և մնացած դերակատարները—օր. Քնարիկ (Իդա), ա. տ. Նոնիկեան (Բուխնէր), տ. Փառանձեմ (Միննա Շոլց) և Օհանեան (Վիլհելմ)։ Վերջը խաղացվեց «Թիւրիմացութիւն» կոմեդիա 1 գործ., հեղինակութիւն Դանդեվիլի։ Այդ կոմեդիան շատ ծիծաղաշարժ qui pro quo ներից է բաղկացած և մեծ զուարճութիւն պատճառեց հանդիսականներին, շնորհիւ Վերոյրի կենդանի խաղին։ Թատրոնը լիքն էր։

Արշ. Առաքելեան

ԽՐԻՄԻ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՓԻՑ

Խրիմի հարաւային ափի կուրօրտներից միայն Եալթան է արժանացել առանձին ուշադրութեան այն անձանց կողմից, որոնք այդ կուրօրտների մասին տեղեկութիւններ են տուել հայ թերթի ընթերցողներին։ Իմ ներկայ նամակով ես կը խօսեմ Ալուպկայի մասին՝—Խրիմի՝ համարձակ կարելի է ասել, ամենամեղմ կլիմայ ունեցող գեղեցիկ կուրօրտի մասին *)։

Ալուպկան մի մեծ գիւղ է,—նոր տարվանից քաղաքի է վերածվում,—որ գտնվում է Եալթայից 16 վերստ դէպի արևմուտք, Սև ծովի ափին և երեք կողմից շրջապատված է սարերով։ Հիւսիսից նրան պաշտպանում է Այ-Պետրի բարձր—4045 ֆուտ—լեռը։ Գեղեցիկ է Ալուպկան թէ իր դիրքով և թէ կանաչաւէտ պարտէզներով, կիպարիսի ծառաստանով ու զբօսավայրերով։ Այս վերջիններից ամենամեծը և ամենանշանաւորն է Վօրոնցովի զբօսապուրակը, որի մէջ գտնվում է իշխանի պալատը։ Մի քանի խօսք կասենք այդ պալատի մասին։ Ներքուստ ոչինչ հետաքրքիր բան չունի նա, որովհետև համարեա թէ դատարկ է. միայն մի քանի աթոռներ, բազկաթոռներ, բազմոցներ և պատկերներ կան մէջը։ Արտաքուստ, ինչպէս ասում են, սա Ռուսաստանի գեղեցկագոյն պալատն է և շինված է ճիշդ սպանիական Ալհամբրայի նմանութեամբ։ Նամանաւանդ գեղեցիկ է պալատի ճակատը, որը նայում է ծովին։ Գլխաւոր մուտքը այդ կողմից է. այդ մուտքին ներքևից տանում են աստիճանները, որոնց երկու կողմերից երեքերեք մարմարէ առիւծներ կան դրած։ Աստիճանների ստորին մասում առիւծների առաջին զոյգը՝ մէկը մի կողմից, միւսը միւս կողմից Նիրհած է, աստիճանների էկսում առիւծները զարթնում են, իսկ ամենաբարձրի զոյգը արթուն կանգնած է և երկու կողմից սրատես նայում է։ Առիւծներից մէկը՝ ստորևի զոյգից ձախ կողմինը՝ այնքան գեղեցիկ ու բնական դիրքով քնած է, որ մարդ ապշում է այդպիսի հրաշալի կերտվածքի վրա։ Անգլիացիների ճաշակը ոչինչից չէ վրիպում. նրանք այս առիւծի համար առաջարկել են յիսուն հազար ռուբլի։

Ալուպկայի բնակիչների թիւը հաշվում է 1000 հոգի։ Բայց տարին վեց հազարի չափ եկեղեցիներ են լինում այստեղ։ Թիւը մեծ է, բայց պէտք է խոստովանել, որ Ալուպկան իրրև կուրօրտ ունի մի մեծ անյարմարութիւն. կեանքը այստեղ սաստիկ թանգ արժէ։ Ամեն բանի մէջ թանգութիւն։ Սեզոնի ժամանակ ամարանոց եկողը պէտք է մի սենեակի համար առնուազը 35 ռուբլի վճարէ, երկու տեսակից բաղկացած ճաշը արժէ քսան ռուբլի։ Եկուորների համար կան մի քանի պանսիօններ, որոնց մէջ կարելի է գտնել կեանքի ամեն տեսակ յարմարութիւններ, բայց այդ պանսիօնների պայմանները ուղղակի անտանելի են. այդ պանսիօններից մէկն ու մէկի մէջ ապրելու համար մի մարդու ամսական կը գնայ 100 ռուբլուց ոչ պակաս։

Աննման կուրօրտ է Ալուպկան թոքերի հիւանդութիւն ունեցողների համար։ Ձմեռ համարեա չը կայ այստեղ։ Մարտի սկզբից բոլորովին գարուն է։ Դեկտեմբերի, յունվարի մէջ պատահում են գարնանային եղանակներ։ Մինչև այսօր դեռ ցուրտ չէ եղել այստեղ և պատուհաններիս առջև, որոնք բացվում են դէպի պարտէզ, վարդերը դեռ շարունակվում են բացվել, իսկ գետնի կանաչ արօտը տարին—բոլոր կայ ու կայ։

Վերջապէս՝ առանձին ուշադրութեան արժանի է Ալուպկայի զարդերից Վօրոնցովի զբօսապուրակը, որը սկսվելով ծովի եզերքից ոչ հեռու, լերան լանջով բարձրանում է բաւական լայնութեամբ։ Տեղացիները գո՛ն են զբօսապուրակի վիճակից և պարծենում են նրանով, բայց Վօրոնցովի զբօսապուրակը իր գեղեցկութեամբ հեռու է Էանտուկիի կամ Կիսլովոդսկի զբօսապուրակներից։ Այստեղ կան բաւականաչափ քարայրներ. սրանց նիւթ են ծառայել այն ժայռերը ու ահագին քարերը, որոնց անհնարին է եղել շարժել տեղերից զբօսապուրակը կարգի բերելու ժամանակ։ Կան երկու լճակներ, որոնցից մէկի մէջտեղում գտնված հսկայ գուղձից շատրուան է խփում։ Պալատից ներքև գտնված զբօսապուրակի մասում կայ «փոքր քաոս» կոչված ժայռերի ու քարերի դիզուածքը։ Այդ քաոսի ծայրը վերջաւորվում է ծովի մէջ կանգնած մի վիթխարի ժայռով, որի անունն է «Այվազովսկու ժայռ»։ Կայ և մեծ «քաոս», որը աւելի վեհաշուք է և որը գտնվում է զբօսապուրակի վերին մասում։ Պէտք է տեսնել այդ խոժոռ քարերի ու ժայռերի դիզուածքը, որ այնպիսի զարմանալի գեղեցկութիւն ունի—և՛ վեհ, և՛ կոպիտ։ Այդ քարերն ու ժայռերը փուլ են եկել Այ-Պետրիից և, միասին հաւաքված, կարծես նայում են վերև՝ փլած բերդի աւերակի նման ժայռին և՝ մոայլ՝ սգում նրա վիճակը, իրանց վիշտը մէկմէկու հաղորդելով...

Սիմ. Բաբիեան

*) Մի քանի տեղեկութիւններ քաղել եմ Մոսկվիչի «Խրիմ» ուղեցոյցից։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Երևան, Նոյեմբերի 25-ին

«Պատմագիրք Հայոց» հրատարակութեան համար համեմատված են Եղիշէի 12 ձեռագիր և մի քանի կարևոր ու հնագոյն տպագրութիւններ։ Սակայն գործի կատարելութեան համար անհրաժեշտ է ի նկատի ունենալ և մնացած տպագիրները, եթէ ոչ բոլորը համեմատելու և ընթերցուածները նշանակելու, գոնէ նրանց առնչութիւնը ձեռագիրների խմբերի հետ պարզելու համար։ Կարևոր են հետևեալ տպագրութիւնները. 1) Պետերբուրգի 1774 թ., 2) Նոր-Նախիջևանի 1787 թ., 3) Կալկաթայի կամ Մադրասի 1816 թ., 4) Կ. Պոլսի 1813, 1860, 1866 թ.թ., 5) Պարիզի 1861 թ., 6) Զմիւռնիայի 1867 թ.։

Խոնարհաբար խնդրում ենք, այն անձինք, որոնք այս օրինակներից ունեն և վաճառել կարող են, հաճին ուղարկել վերադիր վճարով, իսկ եթէ ոչ, գոնէ ժամանակաւորապէս ուղարկեն մեզ, օգտվելուց յետոյ՝ անկորուստ դարձեալ իրանց կը հասցնենք։ Ցանկացողները կարող են նաև փոխանակել մեր տպագրելիք Եղիշէի հետ. այդ դէպքում նրանց օրինակները նուէր կուղարկենք Մայր Աթոռի մատենադարանին։

Հասցէն արտասահմանի համար՝ Erivan, Caucase Recteur du Séminaire arménien Garegin Vardapet Hovsepian.

Գարեգին վարդապետ Յովսէփեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր ընթերցողները գիտեն, որ վերջերս «Новое Обозрѣніе» լրագրի խմբագրութիւնը փոխվեց և նրա նախկին ղեկավարները—իշխան Թումանով և եղբայրները՝ Վ. և Կ. Թումանովները ծախեցին լրագիրը պ. Ք. Քալանթարեանին։ Արդ, Թումանով եղբայրների գրական և հասարակական գործունէութեան հաստակրող մի խումբ անձանց մէջ միտք էր ծագել յարգել Թումանովների 13½ ամեայ գրական գործունէութիւնը մի համեստ ընկերական ընթրիքով։ Կազմակերպվել էր մի կարգադրիչ յանձնաժողով, որի ուղղած հրաւէրին արձագանք էին տուել բազմաթիւ ինտելիգենտ և գրական ու հասարակական ասպարէզում գործող անձինք։ Ընկերական ընթրիքը, որին մասնակցեցին 102 անձ—ռուս, հայ, վրացի—տեղի ունեցաւ նոյեմբերի 27-ին Արտիստական ընկերութեան դահլիճում, երեկոյեան ժամը 11-ին և վերջացաւ ժամը 2-ին։ Ստացվել էին նաև բազմաթիւ հեռագիրներ և շնորհաւորական նամակներ Բաթումից, Քութայիսից, Բագուից, Երևանից, Բօստօվից, Պետերբուրգից և ուրիշ քաղաքներից։ Ընթրիքի նախագահ կամ կառավարիչ ընտրվեց ռուս գրող Օպոչինին։ Ընթրիքի ժամանակ ճառեր արտասանեցին Օպոչինին, Ալ. Քալանթար, դոկտոր Խատիսեան, Գուլաձէ, Միլիւտին («Кавказъ» լրագրի նախկին խմբագիր), Ս. Խաչատրեան, դոկտոր Քուչարեան, Թիֆլիսի նահանգական դատարանի անդամ Միտկէվիչ, Յ. Ամիրխանեան և ուրիշներ։ Թէ այդ ճառերը և թէ ստացված հեռագիրները ու նամակները եղբայրներ Թումանովների արժանիքը և հայրենի երկրին մատուցած ծառայութիւնը գնահատում էին նրանով, որ նրանք տարածում էին իրանց համոզմունքները համոզված, առանց տատանման և երերման, ինչպէս վայել է շիտակ և մաքուր մտաւորականին։ Նրանց խմբագրած լրագիրը չէր շոյում, չէր փայփայում ամբոխի ինստինկտները, հետամուտ չէր շահադիտական նպատակների, չէր անբարոյականացնում հասարակութիւնը այն մասը, փողոցային մամուլի նման, որ ծնվեց հասարակական անշարժութեան շրջանի ժամանակ. այդ լրագիրը ընթանում էր անխախտ, անշեղ կերպով իր ուղիով, ծառայելով երկրի շահերին, չը դնելով ազգայնական խտրութիւններ։ Ճիշդ է, նա խմում էր փոքր բաժակից, բայց նրա խմածը զուտ, անապակ ջուր էր։ Պատասխանելով այդ ճառերին և բարեմաղթութիւններին, իշխան Գ. Մ. Թումանով ասաց, որ ինքն և իր եղբայրները երկար տատանվում էին, ընդունե՞լ արդեօք այն յարգանքը, որ ինտելիգենցիան կամենում էր ցոյց տալ իրանց, բայց մտածելով, որ այդ յարգանքը միայն իրանց չէ վերաբերում, այլ և լրագրի բոլոր աշխատակիցներին, նրանք որոշեցին ընդունել։ Ապա նա շեշտեց, որ իրանց լրագիրը միշտ ձգտել է միացնել լաւագոյն ոյժերը և քարոզել է համերաշխութիւն, սէր Կովկասի զանազան ազգութիւնների մէջ։ Իշխան Վ. Թումանով մի քանի խօսքով ուրուագծեց մամուլի ծանր դրութիւնը և յոյս յայտնեց, որ մամուլի համար լաւագոյն օրեր կը գան։ Կամենալով որ և է շօշափելի բանով յաւերժացնել այդ յարգանքը, ընթրիքի մասնակիցները մի ստորագրութիւն բացին ընթրիքից յետոյ և հաւաքեցին 180 ռուբլի իբրև ֆոնդ այն ընկերութեան, որ ենթադրվում է հիմնել Թիֆլիսում տպագրական խօսքի գործիչների օգնութեան համար։

—

Երգչուհի Պապայեան, որ ներկայումս գտնվում է Թիֆլիսում, համաձայնել է մասնակցել օպերային ներկայացումներին։ Այսօր նա հանդէս կը գայ Վերդիի «Տրավիատա» օպերայում, Վիոլետտայի դերում։

—

«Наша Жизнь» լրագրին գրում են Տամբովից. «Նոյեմբերի 17-ին «Եւրօպական» կոչված հիւրանոցի դահլիճում բանկէտ կայացաւ ի պատիւ Պետերբուրգից նոր վերադարձած Կօլօբովի—նահանգական զեմստվոյի վարչութեան նախագահի և նոյն վարչութեան անդամ Բրիւխատովի։ Բանկէտին մասնակցում էին 200-ի չափ մարդ տեղական և գաւառների ընտիր ու զարգացած հասարակութիւնից։ Ներկայ էին գնահատական զեմստվոյի նախագահը և ուպրավայի 4 անդամները, գաւառական զեմստվոների ուպրավանների ձայնաւորներից շատերը, փաստաբաններ, բժիշկներ, ինժենէրներ, առևտրականներ, նահանգական դատարանի պաշտօնեաներ, ակցիզնիներ և շատ ուրիշ անձեր։ Ստացվեցին բազմաթիւ հեռագիրներ, բազմաթիւ ստորագրութիւններով, որոնցով յայտնում էին, թէ մասնակցում են նրանց բանկէտին։ Բազմաթիւ ճառեր արտասանվեցին։

—

Կազանից գրում են «Н. Ж.» լրագրին, որ տեղական հոգևոր սեմինարիայի մէջ նոյեմբերի 5-ին մի խորհրդաւոր պայթիւն առաջացաւ, որի շնորհով սենեակներից մէկի ծանր ու մեծ վառարանը ցրիւ եկաւ և բոլոր կահկարասիքները ջախջախեցին։ Ասում են, որ այդ անզգոյշ վարմունքի մեղաւորը մի կողմնակի անձ է կամ դպրոցի ծառան, որին արդէն արձակել են պաշտօնից։ Նոյն օրն և եթէ տեղի համալսարանի ուսանողներից 40 հոգու չափ հաւաքվելով ակտի դահլիճը, անկարգութիւններ արին։ Հասարակութիւնը և պատուաւոր հիւրերը, որ եկել էին ակտին, փախան։ Յանցաւորներին քրէական դատի են ենթարկում իբրը հասարակական կարգն ու հանգստութիւնը խանգարողների։

—

Թիֆլիսի պօստ-հեռագրական շրջանի գլխաւորը, հիմնվելով պօստ-հեռագրական կենտրոնական վարչութեան կարգադրութեան վրա, որի համաձայն ոչ այս և ոչ հետևեալ տարին նոր գումարներ չեն կարող յատկացվել պօստ-հեռագրական վարչութեանը նոր բաժանմունքներ բանալու համար՝—վերժում է բոլոր գիւղերի, հասարակութիւնների և համայնքների խնդիրները նոր պօստ-հեռագրատան բաժանմունքներ բանալու վերաբերութեամբ։

—

Գանձակից հեռագրում են «Р. Сл.»-ին, որ տեղական բանտում մի կալանաւոր մեռել է խօլերայից։

—

Սեվաստօպոլից հեռագրում են «Р. Сл.»-ին. «Խրիմի Թուրքերի գաղթականութիւնը դէպի Թիւրքիա չէ դադարում։ «Օլեգ» շոգենաւով երէկ 100 ընտանիք գաղթեցին Թիւրքիա»։

—

Խարկովից գրում են «Р. В.»-ին նոյեմբերի 17-ից. «Համաձայն սովորութեան և կանոնադրութեան, Գիւղատնտեսական ընկերութեան նիստերի համար միշտ գրում են։ «Նիստը դռնբաց է»։ Բայց այս անգամ նահանգապետի պաշտօնակատար փոխ-նահանգապետը հրաւիրել է իր մօտ ընկերութեան նախագահ պ. Բէնիկէին և «պահանջել», որ այսօրվայ նիստը դռնփակ լինի։ Իզուր նախագահը մատնացոյց է առում, որ մինչև այժմ նիստերը միշտ դռնբաց են եղել, որ ուղարկված հրաւիրագրերի մէջ արդէն նշանակված է. փոխ-նահանգապետն իրն է պնդել։ Երբ նախագահն այդ հաղորդեց պրոֆէսսոր Ա. Գ. Զայկեվիչին, որն այդ օրը պէտք է զեկուցում կարդար, նա, լսելով այդպիսի պահանջներ փոխ-նահանգապետի կողմից, չը համաձայնվեց կարդալ իր «վտանգաւոր» զեկուցումը, այսինքն «Բոյսերի հանքային սննդառութիւն արմատից դուրս եղած մասերով»։

—

Անցեալ օրը մենք հաղորդել էինք, որ Եգիպտոսի Ալէքսանդրիա քաղաքում 4—5 հատ պարբերական հրատարակութիւն կայ և 2—3 էլ նորերն են սկսվելու առաջիկայ յունվարից։ Այժմ նոյն բանը մենք ստիպված ենք կրկնել Բոլգարիայի Վառնա քաղաքի վերաբերութեամբ։ Այնտեղ կային «Շարժում», «Իրաւունք», «Վիպաթերթ» և մի քանի տարօրինակ օրգաններ։ Այդ տարօրինակ օրգաններից մէկն էր և Տ. Ճգնաւորեանի «Հայաթերթը», որ մի տարի կեանք ունենալով, դադարեց։ Բայց զարմանալին այն է, որ նոյն մարդը դադարեցնելով «Հայաթերթը», սկսում է «Արգաւանդ» անունով մի նոր կիսաշաբաթաթերթ։ Ի՞նչ նպատակ ունեն այդպիսի շուտ հանդչող թերթերը և այն էլ այդպիսի յեղյեղուկ ուղղութիւնով... իսկապէս անըմբռնելի է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

203 մետրանոց բլրի առումը։ «Д. Г.» լրագիրը ասում է, որ 203 մետրանոց բլրի առումը եապօնացիներին շատ թանգ է նստել—

ոչ պակաս քան 25,000 մարդ։ Նրանք որոշել են շարունակել այդպիսի յուսահատ յարձակումներ այն նպատակով, որ անպատճառ վերցնեն բերդը դեկտեմբերի 10 ին։

«Standard» լրագիրը հաստատում է բլրի առումը անդարմանելի աղէտ ռուսական էսկադրայի համար, որին ճնում է կամ իրան օգը ցնդեցնել, կամ դուրս գալ նաւահանգստից։ Լօնդօնում ժամ առ ժամ սպասում են բերդի անկման լուրերին։ Յարձակումների ժանրամանութիւնները սարսափելի են։ Այն զօրասիւնից, որ առաջին յարձակումն սկսեց, մնացել են միայն մի բուռ մարդիկ։ Մի ժամից յետոյ եապօնացիները վերսկսեցին յարձակումը նոյնպիսի աջողութեամբ։ Տեղի ունեցաւ երրորդ շտուրմ—նոյն հետևանքը։ Այն ժամանակ գեներալ Նոգին չորրորդ յարձակման համար ուղարկեց թարմ զօրքեր։ Նրանք խիզախաբար մագլցեցին ժայռերի վրա, բայց ռուսաց բատարէաները ոչնչացրին նրանցից ամբողջ բատալիօններ։ Նրանք ստիպվեցան յետ դառնալ. ժամը 3½ էր կէսօրից յետոյ։ Հինգերորդ յարձակումը սկսվեց մի ժամից յետոյ։ Եապօնացիներին մօտեցան բազմաթիւ աջակից զօրքեր և սկսեցին յարձակումը հարաւ-արևմուտքից։ Այդ ժամանակ ռուսաց կրակը թուլացաւ և եապօնացիները խուժեցին բլրի գագաթը «բանզայ» աղաղակներով, բայց 100 ոտնաչափ տարածութեան վրա ռուսական կրակները ստիպեցին նրանց կանգ առնել և նահանջել։ Վերջապէս, երեկոյեան ժամը 7-ին միաժամանակ երկու յարձակումն սկսվեց հիւսիս-արևելքից և հարաւ-արևելքից։ Վերջին զօրասիւնը առաջինը գրաւեց գագաթը։ Սկսվեց ձեռնամարտ և երբ օգնութեան հասաւ հիւսիս արևելեան զօրասիւնը, բլուրը վերցրվեց, վերջապէս, ժամը 8-ին։ (Нов.)

Եապօնացիների զայրոյթը։ Տօկիօից հեռագրում են Ռէյտէրի գործակալութեան, որ զայրոյթի զգացումը ժողովրդի մէջ այն օգնութեան առիթով, որ չէզոք պետութիւնները ցոյց են տալիս բալտիական էսկադրային, հետզհետէ աճում է։ Ազդեցիկ լրագիրները միաձայն արտայայտում են ընդհանուր պահանջ, որ կառավարութիւնը վճռական միջոցներ ձեռք առնէ այն նպատակով, որ ստիպէ ուրիշներին յարգել իր իրաւունքները։ Հետևանքը, գլխաւորապէս, կախված է Նրանից, թէ ինչ կը ծագէ, երբ բալտիական էսկադրան կը հասնէ արևելեան ջրերը։ Եթէ այդ ժամանակ պետութիւններից որ և է մէկը կը տայ ռուսական նաւերին այնպիսի առանձնաշնորհութիւններ, որոնք չեն համապատասխանում չէզոքութեան պարտաւորութիւնների արդար մեկնաբանութեան, հնարաւոր է, որ Եապոնիան իրան պարտաւոր չի համարի յարգել այդ պետութեան չէզոքութիւնը և կուղարկէ իր նաւատորմը՝ հալածելու ռուսներին այն նաւահանգիստներում, որոնց չէզոքութիւնը, եապօնական կառավարութեան կարծիքով, խախտված է թշնամու կողմից։ Եթէ ռուսները օգուտ քաղեն չէզոք հողից, Եապոնիան նոյնը կանէ, եթէ հանգամանքները այդ պահանջեն։ Յատկապէս Եապոնիան սաստիկ ցանկանում է խուսափել միջազգային բարդութիւններից։ Բալտիական էսկադրայի գալու առիթով մեծ պատրաստութիւններ են անվում, մանաւանդ նաւատորմի մէջ, որի կազմը յոյս ունէ, թէ կարող կը լինի կատարել իր պաշտօնը, եթէ կռիւը տեղի ունենայ արդար պայմանների մէջ։ Զօրքի վերաբերմամբ ի նկատի է առնվում այն հնարաւորութիւնը, որ ռուսական էսկադրան կը կտրէ Եապոնիայի հաղորդակցութիւնը Լեաոդունեան թերակղզու հետ, ուստի և եապոնական մանջուրական զօրքերը մտադիր են պատրաստվել մինչև բալտիական էսկադրայի գալը, որպէս զի շարունակեն պատերազմը մի քանի ամիսների ընթացքում առանց հաղորդակցութեան Եապոնիայի հետ։ (Р. А.)

Նոգենաւի կալանաւորումն։ Մենք հաղորդեցինք, որ մի փոխադրական նաւ, Դարդանէլի նեղուցից անցնելիս, կալանաւորվեց սուլթանի հրամանով, որովհետև ռազմամթերք էր տանում։ Այժմ «Figaro» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է, որ կալանաւորված շոգենաւը Պակէ ընկերութեան պատկանող «Իմէրեթիա» նաւն էր։ Նա տանում էր ռազմամթերք և թնդանօթներ Բաթում և կալանաւորվեց եապօնական կառավարութեան պահանջով։ Մի քանի բանակցութիւններից յետոյ սուլթանը որոշեց գնել շոգենաւի ամբողջ բեռը։ (Русь)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

27 Նոյեմբերի

ՏԵԱՆՑԻՆ (վերջ)։ Ռուսներն այն ժամանակ ուղարկեցին օժանդակ զօրքեր և գնդաձիգներ լանջի վերին մասերը, նոյնպէս և մարտկոցի մէջ և եապօնացիներին ոչնչացրին։ Այդ տեղում տեղի ունեցաւ ամենամատաղ կռիւը։ Ռուսները կուում էին գերմարդկային քաջութեամբ, բռնվելով եապօնացիների հետ գօտեմարտի, գործադրելով սուիններ և ձեռքի ռումբեր։ Վերջապէս եապօնացիները գրաւեցին շրջապարսպից 4 մէտր հեռու եղած խրամատները, որ այժմ ռուսների ձեռքին են։ Եապօնացիները և ռուսներն իրար ռմբակոծում են ուժանակէ ռումբերով։ Եապոնացիները յուսահատական ջանքեր գործ դրին արևելեան էրլունշանին տիրելու համար և մթութեան մէջ յարձակվեցին զօրանոցների առաջին գծի վրա։ Ռուսները պաշտպանվեցին սուիններով և դինամիտի ռումբերով։ Եապօնացիները գրաւեցին մարտկոցի ներքին մասը, բայց վերին հրապարակի վրա գրոհ տալու փորձ անելով, անգին քանակութեամբ կոտորվեցին։ Նոյնպիսի կատաղի կռիւ տեղի ունեցաւ և Արևմտեան էրլունշան մարտկոցի շուրջը։ Կռիւը տևեց մինչև լուսաբաց, երբ եապօնացիները ստիպված եղան յետ քաշվել հրապարակի պարսպից դուրս եղած ամուր խրամատները։ Ռուսներն ու եապօնացիներն այնքան իրարից մօտ էին, որ հազիւ մի քանի մետր տարածութիւն կար նրանց միջև։ Սկզբից մինչև վերջը կռիւը ձեռնամարտ էր, սուինների և ձեռքի ռումբերի օգնութեամբ։ 203 մետրանոց բարձունքի յարձակումը տևեց 6 օր։ Կռիւը յուսահատական էր։ Բլուրի արտաքին տեսքը բոլորովին փոխվել էր արտիլերիական զարհուրելի կրակի ազդեցութեան տակ։ Եապոնացիները մի կեղծ յարձակում գործեցին և խաբելով դուրս հանեցին ռուսներին, ստիպելով իջնել բլուրից, որ և եապօնացիները գրաւեցին։ Ռուսների յատուկ դիմադրութիւնը ծառայում է իբր ապացոյց, որ նրանք մտադիր չեն անձնատուր լինել, քանի դեռ յոյս կայ բալտիական էսկադրայի օգնութեան վրա։

ՄՈՒԿԴԷՆ, 27 Նոյեմբերի։ (Սեփ. Թղթ.)։ Մուկդէն վերադարձաւ Բուրբօնեան պրինցը որին աջողվեց կատարել մի ծանր ձեռնարկութիւն գործող բանակի շրջանից դուրս։

ԼՕՆԴՕՆ, 27 Նոյեմբերի։ (Ռէյտէր)։ Թագաւոր Կայսրը Բարձրագոյն բարեհաճեց հրամայել՝ տալ անգլիական «Տալբօտ» կրէյսերի օֆիցէրներին արծաթէ գաւաթ, որի վրա հետևեալ մակագրութիւնը կայ. «Ռուսական Կայսրը նուիրել է «Տալբօտի» օֆիցէրներին իբր նշան բարեկամական շնորհակալութեան այն օգնութեան համար, որ նրանք ցոյց տուին «Վարիագի» և «Կորէեցի» ծառայողներին 1904 թ.ի փետրվարին Չէմուլպօի ճակատամարտից յետոյ»։ Նորին Մեծութիւնը հրամայեց մի և նոյն ժամանակ Ուէլսի իշխանին յանձնել 500 ֆունտ ստէրլինգ ծովային արքայական ֆոնդի համար, որի նախագահն է իշխանը։—Անգլիական կառավարութիւնը շնորհակալութիւն յայտնեց Թագաւոր Կայսրին «Տալբօտի» օֆիցէրների անունից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Քաղաքապետի հրամանը. «Ի նկատի ունենալով տարածված լուրերը, թէ հնարաւոր են փողոցային ցոյցեր, որ տարբերում են չարամիտ անձանց խմբեր և որոնց հետևանքը լինում է սովորաբար հասարակութեան համախմբումն մայրաքաղաքի գլխաւոր փողոցներում, Պետերբուրգի քաղաքապետը իր պարտքն է համարում նախազգուշացնել, որ ոստիկանութիւնը, օրէնքի հիման վրա, պարտաւոր է կարական միջոցներ ձեռք առնել վերացնելու ամեն տեսակ խմբական անկարգութիւն և վերականգնելու հասարակական և փողոցային երթևեկութիւնը։ Եւ որովհետև այդ դէպքերում խմբի համախմբումը կարող է դժբաղդ դէպքերի պատճառ դառնալ, ուստի հասարակութիւնը հրաւիրվում է խուսափել ամեն տեսակ բազմամարդ համախմբութիւններից փողոցներում, հէնց դրանով էլ պաշտպանելով իրան անկարգութեան հետևանքներից»։

ՆԻԻ-ԵՕՐԿ, 27 Նոյեմբերի։ (Ռէյտէր)։ Լրագիրներում տպված է հեռագիր, որ Նիւ-Զէրսիում Ռուսաստանի համար կառուցված ինն ականանաւեր մաս մաս կը բեռնվեն շոգենաւի վրա որպէս Ռուսաստանի համար ուղարկվելիք ապրանք։ Տասերորդ ականանաւը անցաւ Ատլանտեան ովկիանոսը ինքնուրոյն։

ՎԻԵՆՆԱ, 27 Նոյեմբերի։ Շվէյցարական գործերի հաւատարմատարը և արտաքին գործերի մինիստր կոմս Դոլուխովսկի ստորագրեցին դաշնագիրը միջնորդ դատարանի միջոցով գործերը քննելու մասին։

ՍՏՕԿՀՕԼՄ։ Ռուսական ֆիզիօլոգ պրոֆէսոր Պավլով ստացաւ Նոբէլեան պրէմիա բժշկական գիտութիւնների համար։

Կ. ՊՕԼԻՍ, 25 Նոյեմբերի։ Բ. Դուռը մերժողական պատասխան տուեց դաշնագիր պետութիւնների դեսպաններին օտարազգի օֆիցէրների թիւ մեծացնելու վերաբերմամբ մակեդոնական ժանդարմերիայի մէջ։ Դեսպանները անյապաղ կը ներկայացնեն առարկութիւններ և լուրջ կերպով կը պնդեն իրանց առաջարկութեան վրա։

ԲԷԼԳՐԱԴ, 27 Նոյեմբերի։ Երկու արմատական կլուբներ համաձայնվեցին կազմակերպել չափաւոր կաբինէտ։

28 Նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Երևանի նահանգը և Բագուի նահանգի Լէնքօրանի ու Ղուբայի գաւառները խշլերայի կողմից անբարեյաջող են յայտարարված։

ՏՕԿԻՕ, 27 Նոյեմբերի։ «Սայնն», մարտաւնաւը նոյեմբերի 27-ին դիպաւ ականին և ջրասոյզ եղաւ։ Էկիպաժի մեծ մասը ազատված է։—Ֆօրմօզեան դիվիզիայի մեծ մասը դեռ ևս չէ գնացել։ ըստ ամենայն հաւանականութեան 7 դ դիվիզիան Դալնիից ուղևորվում է ոչ թէ դէպի Օյամայի բանակը, այլ Նոգիի պաշարող զօրքի մօտ։ Ի նկատի ունենալով այն ծանր կորուստները, որ կրել է առաջին դիվիզիան Բարձր լեռը վերցնելու ժամանակ, բոլոր օժանդակ զօրքերը գալուց յետոյ միայն կը սկսվեն ապագայ շտուրմերը, որոնց հազիւ թէ կարելի է սպասել յունվարի կէսից վաղ, իսկ շատ կարելի է մինչև անգամ փետրվարին։

ԲԵՐԼԻՆ, 27 Նոյեմբերի։ Գերմանական ազատ մտածողների և ժողովրդական կուսակցութիւնները մտցրին ըէյխստագ մի որոշում արդարադատութեան բիւդժէտի վերաբերմամբ, պահանջելով, որ օտարանպատակներին իրանց պետութիւններին յանձնելու վերաբերեալ դաշնագիրները կապվեն, կայսերական սահմանադրութեան 11-դ յօդուածի համաձայն, միայն կայսրութեան և օտար կառավարութիւնների միջև։ Ինչ վերաբերվում է դաշնագիրներին այդ մասին, որոնք կապված են առանձին գերմանական պետութիւնների հետ արտաքսմանում, պէտք է անյապաղ յայտարարվի, որ նրանց գործունէութիւնը դադարած է։

ԼՕՆԴՕՆ, 27 Նոյեմբերի։ Պօրտուգալական Թագաւորը ճանապարհ ընկաւ Պարիզ։

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ, 28 Նոյեմբերի։ (Սեփ. Թղ.)։ Զինուորական դատարանում քննվում էր մի խունխուզի գործը, որին բռնել էր կամաւոր հեծելախմբի մի զինուոր։ Մեղադրեալը դատապարտվեց տաժանակիր աշխատանքներին տասերկու տարով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ-լէյտենանտ Սախարովի հեռագիրը գլխաւոր շտաբին 1904 թ.ի նոյեմբերի 27-ից. «Ներկայ նոյեմբերի 27-ին գիշերվայ մօտ 2 ժամին Լինշիպուի մօտ եղած դիրքի աջ թևի վրա երևաց հակառակորդի մի քանի խմբերի արշաւումը, որոնցից իւրաքանչիւրը բաղկացած էր 30 մարդուց։ Հակառակորդը մօտ տարածութիւնից դիմաւորվեց հրացանաձգութեամբ և կորուստներ կրելով, հեռացաւ։ Նոյեմբերի 25 ի ընթացքում հրաձգութիւնների ժամանակ բանակի ամբողջ ճակատի վրա մեզանից սպանվեցին երկուսը, վիրաւորվեցին տասը և թեթև վիրաւորվեցին երեք զինուոր։ Օրվայ ընթացքում զեկուցումներ պատերազմական ընդհարումների մասին չեն ստացված»։

ԲԷԼԳՐԱԴ, 26 Նոյեմբերի։ Նոր մինիստրութեան կազմը հետևեալն է. Պաշիչ—մինիստր-նախագահ և արտաքին գործերի, Վելիմիրովիչ—պետական խորհրդի նախագահ և հասարակական աշխատանքների մինիստր, գեներալ Պուտնիկ—զինուորական, Պրոտիչ—ներքին գործերի, Պաչու—ֆինանսների, Բաղդանովիչ—առևտրի և Անդրա Նիկոլիչ—ժողովրդական լուսաւորութեան և ժամանակաւորապէս արդարադատութեան։ Հոմի դեսպան Միլովանովիչ հրաժարվում է մտնել նոր մինիստրութեան կազմի մէջ, որով դժգոհութիւն յարուցեց իր և իր կուսակցութեան դէմ։ Արդարադատութեան մինիստրի պօրտֆէյլը առաջարկված է հեռագրով դեսպան Վեսնիչին։ Երկարատև ճգնաժամից յետոյ կազմակերպված նոր մինիստրութիւնը ընդունվեց թեթևութեան զգացմունքով. նրան խոստացված է մեծամասնութեան աջակցութիւնը։

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ, 28 Նոյեմբերի։ Հոգևոր դասակարգից մատուցված է խնդրագիր, որը առաջարկում է միջնորդել Ֆինլեանդայում պետական կարգը և հասարակական հանգստութիւնը պաշտպանելու միջոցների վերաբերեալ 1903 թ.ի փետրվարի 2-ի Բարձրագոյն որոշումը վերացնել, նոյնպէս վերացնել 1903 թ.ի դեկտեմբերի 23-ի Բարձրագոյն հրովարտակը, որով Ֆինլեանդիայի սահմաններից աքսորվածները զրկվում են հրապարակական, քաղաքական և հասարակական իրաւունքներից։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 27 Նոյեմբերի։ Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչ և Մեծ Իշխանուհի Կսէնիա Ալէքսանդրօվնա ընտանիքով ճանապարհ ընկան Պետերբուրգ։

ՄԱԴՐԻԴ, 27 Նոյեմբերի։ Սենատն ընդունեց անիշխանութիւնը ճնշելու վերաբերեալ օրինագիծը։

29 Նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պաշտօնական հաղորդագրութիւն։ Նոյեմբերի 28-ին, ցերեկվայ 1 ժամին, Նէվսկի պրոսպէկտի վրա Պօլիցէյսկի կամուրջի և Սադովայա փողոցի միջև եղած տարածութեան վրա հասարակութեան մեծ բազմութեան ներկայութեամբ տեղի ունեցաւ փողոցային անկարգութիւն, որին մասնակցում էր գլխաւորապէս ուսանող երիտասարդութիւնը, թւով մի քանի հազար հոգի։ Զանազան տեղերում լսվում էին դէմոնստրատիվ երգեցողութիւն և աղաղակներ և բարձրացրել էին տասը կարմիր դրօշակներ հակակառավարչական մակագրութիւններով։ Հետևակ և հեծեալ ոստիկանութեան և ժանդարմների դիվիզիայի միջոցներով ամբոխը շուտով ցրիւ եկաւ, դրօշակները անյապաղ խլվեցին, իսկ դրօշակակիրները և ոստիկանութեանը դիմադրութիւն ցոյց տուող անձինք բռնվեցին։ Ընդհանուր խառնակութեան և ճիլոցի ժամանակ ցոյց անողները սկսեցին ձեռնափայտի դիմել, իսկ ոստիկանութեան պաշտօնեաները ստիպված էին մերկացնել սրերը և սրի տափակ կողմով խփել։ Ի հարկէ ֆանատիկներ և պատանեմամբ վիրաւորվողներ եղան, բայց չը կային ոչ սպանվածներ, ոչ էլ ծանր վիրաւորվածներ։ Ոստիկանութեան հանդուն ջանքերով կարգը կատարելապէս վերականգնվեց ցերեկվայ մօտ երեք ժամին, իսկ մօտ չորս ժամին Նէվսկի պրոսպէկտը իր սովորական տեսքն ընդունեց։

29 Նոյեմբերի

ՇԱՆԳՀԱՅ, 29 Նոյեմբերի։ (Ռէյտէր)։ Եապօնացիների գործունէութիւնը Շախէի ուղղութեամբ սահմանափակվեց ռուսական դիրքերի զօրեղ ռմբակոծութեամբ նոյեմբերի 26-ին։ Կարծում են, որ եապօնացիները դիտաւորութիւն ունեն սկսել ընդհանուր առաջխաղացութիւն։ Պէկինից ստացված տեղեկութիւնների համեմատ, ռուսները յետ նահանջեցին Խունխէի հարաւային ափից 72 ժամ տևող կատաղի կռիւից յետոյ։ Եապօնացիները իբր թէ սկսեցին առաջ խաղալ։

ՏՕԿԻՕ, 28 Նոյեմբերի։ (Ռէյտէր)։ Մանջուրական բանակից ստացված տեղեկութիւնների համեմատ, նոյեմբերի 25-ին ձախ և աջ թևերի մօտ լսվում էր թնդանօթաձգութիւն մինչև կէս գիշերը։ Կարծում են, որ դա նշան է թէ եապօնացիները կարշաւեն մօտ ժամանակները։

ՊԷՐԻՄ, 28 Նոյեմբերի։ (Ռէյտէր)։ Անգլիական «Ֆօկս» կրէյսերը կանգնեցրեց Մուզամբիկ գնացող անգլիական շոգենաւը, որի վրա, ինչպէս ասում են, ածուխ կար ռուսական էսկադրայի համար։ Քննելուց յետոյ շոգենաւը արձակվեց։

ՏՕԿԻՕ, 23 Նոյեմբերի։ (Ռէյտէր)։ Եապօնացիները շարունակում են ռմբակոծել Պօրտ-Արտուրի էսկադրան։ Այդ էսկադրան հազիւ թէ կարողանայ գործել եապօնացիների դէմ։ «Սեվաստոպոլ» զրահակիրը խարխիս ունի գցած արտաքին նաւակայանում, բայց երևի դիշերը կը վերադառնայ նաւահանգիստը եապօնական ականանաւերի յարձակումից խուսափելու համար։ Նորերս փոթորկալի եղանակի պատճառով նա պաշտպանեց իրան նոյնպէս ականային շոգեշարժ մակոյկներից։

ՏԵԱՆՑԻՆ, 29 Նոյեմբերի։ (Ռէյտէր)։ Անընդհատ կռիւը շարունակվում է Մուկդէնից հարաւ։ Ինչպէս ասում են, ռուսական զօրքի թիւն է 400,000, որից 40,000 հեծելազօր է։ Ամեն բանից երևում է, որ ռուսները կաշխատեն պահել Մուկդէնը իրանց ձեռքում։ Հաւատացնում են, որ 2,000 եապօնացիներ գաղտնի ափ են իջել Ցզինչժօուի մօտ։ Արված պատրաստութիւնները ցոյց են տալիս, որ եապօնացիները ուղարկել են արագաշարժ զօրասիւներ պատերազմական գործողութիւնների շրջանից այն կողմը, որպէս զի սպառ-

նան ռուսական հաղորդակցութեան գծին Տէլինից հիւսիս։

ՏՕԿԻՕ, 28 նոյեմբերի։ (Էյմէր)։ Մինիստրների Նախնական խորհրդակցութիւնը կուսակցութիւնների պարագլուխների հետ հասցրեց կառավարութեան մշակած պատերազմական պիտոյքների ծախքերի նախահաշիւի հաւանութեանը, սակայն մի քիչ փոփոխելով այդ նախահաշիւը, ընդհանուր հարկերը շատացնելու փոխարէն՝ մի քանի միլիոն ֆունտ ստէրլինգ քչացնելու համար։ Կառավարութիւնն էլ որոշեց այդ գումարը ծածկել սովորական ծախքերի յօգուտ ծածկելով։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 29 նոյեմբերի։ (Էյմէր)։ Ասում են, որ չիլիսկան պատերազմական նաւը ծախել չանացող Ֆլինը մեծ դժուարութեան մէջ է, որովհետև Չիլիի հասարակապետութիւնը պահանջում է նրանից իսկական երաշխաւորութիւն, որ այդ նաւը չէ ծախվելու երկու ժարտնչող կողմերից որ և է մէկին։

ՕՐԵՕԼ։ Եպիսկոպոսի ջանքերով հաւաքված և Պետերբուրգ՝ Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնայի պահեստատեղերն է ուղարկված հոգևորականութեան, մենաստանների և թեմի ծխականների նուիրած վիրաւոր և հիւանդ զօրականների համար տաք զգեստներ 48,000 ր. արժէքի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ-ադիւտանտ Կուրոպատկինի ամենահպատակ հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեան Անունով՝ 1904 թ. Նոյեմբերի 28-ից. «Նոյեմբերի լոյս 28-ի գիշերը պատերազմական ընդհարումների մասին զեկուցումներ չեն ստացվել։ Գիշերը 20 աստիճան ցուրտ էր։ Վերոգրեալի մասին ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձերդ Կայսերական Մեծութեան»։—Գեներալ-լէյտենանտ Սաֆսրովի հեռագիրը գլխաւոր շտաբին 1904 թի Նոյեմբերի 28-ից. «Նոյեմբերի 28-ին պատերազմական ընդհարումների մասին զեկուցումներ չեն ստացվել։ Այսօր մի քիչ հիւսիս-արևելեան քամի էր փչում և ցուրտը հասնում էր Ռէօմիւրի 17 աստիճանին»։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԻՆ ԲԺԻՇԿ Ս. Զ. ՄԻՐԶՈՅԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր, ժ. 2—3 և 5—7 երեկոյեան, իսկ տօն օրերին առաւօտեան ժամը 10—11. Սօլօլակի փող. № 6.
(ա. օ.) 9—50

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
ճարտկին օրդինատոր Մոսկվայի համալսարանի կլինիկայի
Ընդունում է յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին։ Ընդունելութիւն ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 6—8 ժամին երեկոյեան։ Ռտիշչևսկի № 1, «Պօժարնի կօմանդի» դիմացը. տէլէֆօն № 11. 6—10

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Ընդունում է մանաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներ ամենայն օր 12—2 առաւօտ. և 6—8 երեկ.
Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանովի—դեղատան կից։ (ե. հ. շ.) 8—10

Ի. Եա. Դօկտօր Ղոկիելեան
Մասնագէտ վեներական, սիֆիլիտական, կաշուի և ջղային հիւանդութիւնների։ Բժշկում է ջղային թուլութիւնը էլէկտրականութեամբ։ Ընդունելութիւնը 9—12 ժ. և 5—8 ժամ երեկոյեան, Միխայլովսկի պրոսպէկտ. № 149։
(Չ. կ.) 2—4

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ե. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային և սիֆիլիսիքական հիւանդութիւնների,—ընդունում է հիւանդներին առաւօտեան 12 ժ.—1 ժ. երեկոյեան, 6. ժ.—9 ժ.։ Կուկիա, Սեմենովսկայա փ. № 20.
(ո. կ. ե.) 28—30

ՎԻՆՆՆԱ. ԲԺ. Պ. Մ. ԱՖՐԻԿԵԱՆ
Կազմում է խորհուրդներ տեղիս մասնագէտ-պրոֆէսորների հետ Ռուսաստանից եկող հիւանդների համար։
D-r med. P. Afrikiann.
Հասցէն Wien, I, Tegetthoffstrasse, 1 Pensio.
50—50

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. Ղարասարդեան
տեղափոխվելով Թիֆլիսից ՐՕՍՏՕՎ
Հիւանդներին ընդունում է 11—12 ժ. առ. և 7—8 ժ. երեկոյեան։
Б. Садовая, 136, д. Бакалова.
(ո. կ. ե. հ.) 61—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԵՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինովսկայա փողոց № 8։ (ե.ո.) 45—100

Երդուեալ հաւատարմատար
Ս. Ս. ՄԷԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆՑԻ
„Практическое Руководство“
для составленія бумагъ по дѣламъ Гражданскаго Судопроизводства въ ЗАКАВКАЗСКОМЪ КРАѢ, изд. 1904 года“.
Գինն է 1 ռուբլի։
Վաճառվում է Թիֆլիսում. Կենտրոնական, Խիղդէկելի և Գուտտէնբէրգ գրավաճառանոցներում։ Հեղինակին դիմողներ՝ (Прис. повѣр. С. С. Меликъ-Адамову, Тифлисъ. Межевая ул., д. № 40) 10 օրինակից աւելի պահանջողները՝ ստանում են 20% զեղչ և ճանապարհածախս չեն վճարում։ ե. շ. 5—30

ԾԱԽՎՈՒՄ Է բուրդ զզելու մեքենայ. հասցէն՝ Գեսկօվսկի փողոցի և Դեսիմօնովսկի հրապարակի անկիւնը, տուն Թայիրեանի։ Գնի մասին տեղեկանալ այնտեղ։ ո. կ. ե. 3—3

I
Յովհ. Արաբաջեանի
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ
ա., բ. և գ. տարի
Դիմել հետևեալ հասցէով՝ Александрополь, М-lle Сирануйшѣ Арабаджіанцъ.

II
Յովհաննէս Արաբաջեանի նոր հասցէն՝
Ростовъ н/д., Уголъ Пушкинской ул. и Большого проспекта д. № 152 Оболешевой.
Չ. շ. 8—10

Պահանջեցէք ամեն տեղ «ՕԴՕԲՐԻՆ»։
Միայն Միխայիլ Լեբեդեվի
„этикетъ утвержденъ прав.“ մակագրութիւնով։

Գլխաւոր պահեստատեղին դեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում։
10, 20, 30 նոյ.—դ. 15 և 30 12—14

Թիֆլիսի Ազնուականների պատգամաւորական ժողովը, ձեռնարկել է ազնուականների տոհմագրական գրքերի կազմութեանը և սկսել է կազմել հեռևեալ ընտանիքների տոհմագրութիւնը. Աբաշիձե, Աբխամի, Ամամեիքիօվներ, Ավալօվներ, Ամատունցովներ, Աբիլսխորի, Ամիրաջիբի, Բագրատիօն-Մուխրանսկիներ, Բագրատիօն-Դաւիդիօվներ, Բարատօվներ, Բեբուրօվներ, Բեկաբեկօվներ, Վախվախօվներ-Վաչինաձե, Վեգիրօվներ, Գուգինսկիներ, Դուրամօվներ, Զանդիերի, Ջորջաձե, Լիսնիձե, Մա, գալօվներ, Սելիքօվներ եւ Մայաբելի, խնդրում է վերոյիշեալ ընտանիքներին պատկանող անձերին, որոնք ցանկանում են արագել տոհմագրութեան մէջ մտած տեղեկութիւնների լիակատարութիւնը և կանոնաւորութիւնը, դիմել Պատգամաւորների ժողովին (Սօլօլակի փողոց № 10), շաբաթ օրերը, ցերեկվայ ժամը 11—12-ին։ 4—5

Ս. Յ. ՄԱՏԻՆԵԱՆՑԻ
գրականական պիտոյից մագազինը (Միքայէլ. մաղուրը) միշտ պահում է մեծ ընտրութիւն
100,000 ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐԻ 100,000
Նորութիւններ ստացվում են անընդհատ։
Գինը 2, 3, 5, 8, 10 15 և 20 կօպէկ։
Վաճառականներին մեծ զիջում. գաւառներից ստացված պատուէրները կատարվում են իսկոյն։ (շ. Չ.. 2—6

ԹԻՖԼԻՍԻ ԱՐԲՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ
Ձեռնարկութիւն Կայսերական թատրոնների արտիստ Լ. Դ. Թօնսկոյի
Այսօր, երեքշաբթի, նոյեմբ. 30 ին, Կայսերական թատրոնների արտիստուհի Ն. Ա. ՊԱՊԱՅԵԱՆԻ առաջին գաստրոլ, ժանակցութեամբ տ.տ. Խարիտօնովայի և Ֆերարի, պ.պ. Սիկաչինսկու, Օբրազցովի, Դեմեանենկօի, Բագրովի, Զալինսկու և Մուրատովի.
Կը ներկայացվի
ՏՐԱՎԻԱՏԱ
օպեր. 4 գործ. երաժ. Վերդիի։
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։
Վաղը, չորեքշաբթի, դեկտեմբերի 1-ին վրաց դրամատիական ընկերութեան ներկայացում կը ներկայացվի ՈՒՐԻԷԼ ԱԿՕՍՏԱ, տրագեդիա 5 գործ.։ Հինգշաբթի, դեկտեմբերի 2-ին, բենեֆիս Ն. Ի. Սպերանսկու, կը ներկայացվի ԲՕՐԻՍ ԳՕԴՈՒՆՕՎ, օպեր. 5 գործ. երաժ. Մուսորգսկու։
Պատրաստվում են ներկայացնելու ՄԱՆԴԱՐԻՆԻ ՈՐԴԻ, օպեր. 1 գործ. երաժ. Կիւբ. ՄԱՆՕՆ, օպեր. 5 գործ. երաժ. Մասսընէի։
1—1 Կառավարիչ՝ Ի. Ա. Կէլէր

Շաբաթ, դեկտեմբերի 4-ին նշանակված է
ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ
Ընդհանուր հիմքերով։

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Երեքշաբթի, նոյեմբերի 30 ին, Թիֆլիսի Ժողովարանի սիրողների խումբը, անդամների, կանդիդատների և նրանց ընտանիքների համար կը ներկայացնէ
ԹՈՒՂԹ ԽԱՂԱՑՈՂԻ ԿԵԱՆՔԸ
դրամա 4 գ. թարգ. ֆր. Ռ. Պատկանեանցի
Մասնակցում են՝ տ Մամուլեան. օր. Բուչուկուրի. պ.պ. Վանշիր, Շիրինեան, Սանթուրճեան, Խօջա, Ապրեսեան, Սարեան, Մակարեան, Եսայեան, Էստօրինօ։
Տեղերի գները 1 ռուբլ. մինչև 30 կօպ.
Սկիզբը ճիշդ ժամը 8½-ին երեկոյեան։
Աշակերտներին մուտքը արգելված է։
2—2 Բեմիսսօր Գ. Վ. Միրզաեան

Թարգմանվեց հայերէն լեզուով և թոյլատրվեց խաղալու համար՝
Ա Զ Ի Ա Ն Ի Ի
«ԽԱԲՎԱԾ ՅՈՅՍԵՐ»
կօմ. 2 գործ. պիէսը։
1—2 Թարգ. Մարսօի

«ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ»
գրախանութում վաճառվում են Ալ. Քալանթարի հետևեալ աշխատութիւնները.

«Մանրանկարներ», երկու հատոր	1	50
«Սասուն», Սասունի քարտէզով	—	20
«Կեանքի գծեր»	—	30
«Պատրիկեանի նամակները»	—	60
«Молочное хозяйство»	—	10

Դիմել. Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенбергъ“ Г. Галустянцу. 1—10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Ա. Ստեփանեան
Ընդունում է առաւօտեան 9—2 և 5 7, Վելիամինսկայա փ. № 8.
ա. օ. 14—100

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ
ՆՈՐ ԳՐՔԵՐԸ.

«Կայծեր» I, II և III հատոր Բաֆֆիի	5	—
«Դաւիթ բէկ» » » »	3	50
«Սամուէլ» » » »	3	50
«Տաճկահայք» »	—	50
«Ոսկի աքաղաղ» I, II » »	1	—
«Զահրումար» . . . »	2	—
«Գլը-Գուղի», իմաս. և առակ. հայոց	—	45
«Լծի տակ», Ի. Վազովի . . .	—	80
«Զէյթունի անցեալէն և ներկայէն», Ա. և Բ. հատ. Զէյթունի հերոսն. պատ.	2	75
«Ընտիր Հայկազունք», պատկերազարդ	2	25
«Հայկական տպագրութիւն», I և II հատ. (II հատ. կազմած է) Լէօի, . .	3	20
«Դէպի Արարատ», Ա. Մխիթարեանի	—	40
«Հարկերը Տաճկաստանում», Խաչակի	—	50
«Պետրոս Դուրեանի բանաստեղծ.» .	—	20
«Աշոտ Երկաթ», պատմ. վէպ, Այվազեանի	1	—
«Պատկերներ Բաֆֆիի կեանքից», Բաֆֆիի պատկերով, գրեց Ա. Խան. Ալթ.	—	40
«Լուսադէմին», Տ. Եժի 530 մեծ. երես	1	—
«Մոխրակ Հայաստանի», լիակ. երգարան	1	20
«Մրրկի սուրբը», Ա. Ահարոնեանի .	1	—
«Արազը» և ուրիշ պատմուածքներ Ա.	—	80
«Լուսթիւնը» » »	—	60
«Հացի խնդիր». Գուշեանի . .	1	50
«Սօս և Վարդիթեր» » . .	1	20

Նաև զանազ. տեսակ «Ազգային գործիչներ», բաց նամակներ հատը 5 կ., 100 հատը 3 ր. 50 կ., 1000 հատը 30 ր.։ Շուտով լոյս կը տեսնի Բաֆֆիի «ՍԱԼԲԻ» անտիպ ձեռագիրը երեք հատոր. դիմել՝ Баку, Оганесу Газанчіану (հայոց եկեղեցու հակը) շ. 3—3

№ 4711
Օ-ԴԸ-ԼԻ
(EAU DE LYS.)
Սպիտակ, վարդագոյն և դեղին գոյներով
ամենից ճանաչված է իբր առաւելագոյն գեղեցիկ միջոց երեսը լուանալու, երիտասարդութիւնը և թարմութիւնը պահելու և պզուկներն ու դէմքի ամեն տեսակ անմաքրութիւնները հեռացնելու համար։
ԼԻԼԻԱՅԻ
ԿԱԹՆԱՅԻՆ
ՍԱՊՈՆ
SAVON AU LAIT DE LYS
չափազանց քնքոյշ
խիստ յանձնարարվում է
սպիտակ և քնքոյշ կաշի
ունենալու համար։
Միակ արտադրող
ՖԷՐԴ. ՄԻԼԳԷՆՍ
Կեօլն Հռէնոսի վրա և Բիդա.
Նորին Կայսերական Մեծութեան Արքունիքի Մատակարար։
№ 153773/78 1—6
ն. 3, 27, դ. 22, փ. 2, մ. 12, ա. 13.

Կենտրոնական Գրավաճառանոցում
Թիֆլիս, վաճառվում են հետևեալ նոր գրքերը.

Ալթունեան Գ., Հայոց նախնական պատմութիւնը ըստ Մովսէսի գ.	—	25
Աբարի, Սրբազան ժամեր, տեսք առաջին	—	30
Բուդուղեան բժ., Սուղօլի Վիրխով	—	25
Գօգօլ, Ամուսնութիւն, կատակերգութ. 2 գործող. թարգմ. Պոլշեանց Պ.	—	30
Գէօթէ, Հերման և Դորոթէա, թարգմ. Պետրոսեանի	—	40
Էկալաձէ Ի., Լուսնեակ գիշերին, էսկիզ թարգմ. Ղ. Կ.	—	5
Իբսէն Հ., Հասարակութեան նեցուկները, դրամա 4 գործ. Լ. Բաբայեանի	—	50
Լէօ, Հայկական տպագրութիւն, հ. ա. երկրորդ տպագրութ	1	20
Մխիթարեան Արշ., Դէպի Արարատ, ուղևորութիւն, Հանրամատչ. գրադարան № 7	—	40
Մուրացան, երկասիրութիւններ, առաջին հատոր	1	50
Շանթ, Եսի Մարդը, դրամա հինգ արարարուածով	—	60
Շիրվանզադէ, Ժողովածու, 3 հ.	4	50
Պետրով Գր. քահ., Բարի սերմեր, թարգմ. Մաժբրէ վարդապետ	—	10
Պուշեանց Պերճ, Սօս և Վարդիթեր	1	20
» » Հացի խնդիր ,	1	50
Պալասանեան Ս., Պատմութիւն հայոց սկզբից մինչև մեր օրերը	1	50
Վ. Տ., Նինի համար, թարգմ. ռուսերէնից Յ. Եսայեան	—	3

Նոյն գրատանը պատրաստված են առաջիկայ Ծննդեան տօներին պարգևելու համար մեր նշանաւոր հեղինակների աշխատութիւնները կազմած և անկազմ ամեն հասակի համար, օրացոյցներ 1905 թ։

ՏՂԹԱՅ
Նաւթարդիւնաբերական ընկերութեան վարչութիւնը յայտարարում է ի գիտութիւն պ.պ. բաժնետէրերի, որ նա նշանակել է 77-դ վճար, այսինքն 7 ր. իւրաքանչիւր փայի համար 1-ից մինչև դեկտեմբերի 7-ը ներփակաբար և 8-ից մինչև 17-ը ներփակաբար պէնինգներով, որից յետոյ, փայերը, որոնց համար վճարներ չեն մտցնվի, ընկերութեան դաշնագրի 7 § համաձայն, անվաւեր են համարվում։
Վճարները կընդունվեն Ընկերութեան գրասենեակում, որ գտնվում է Լերմօնտօվսկայա և Վելիամինովսկայա փողոցների անկիւնում Խանկալաձովի տան մէջ (մուտքը Լերմօնտօվսկայա փողոցից) առաւօտեան 9 ժամից մինչև ցերեկվայ 2 ժամը և 6 ժամից մինչև երեկոյեան 9 ժամը։
Վճարը մտցնելու ժամանակ փայատէրերը պարտաւոր են ներկայացնել փայերի անդորրագրեր։ (20, 27, 30) 3—3

Дозволено цензурою. Тифлисъ, 29-го ноября 1904 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ. Типогр. Т—ва С. Назарянца и К. п. ф. «ГЕРМЕСЪ». Мад. ул. № 15.